

5.2. 2001թ. հոկտեմբերի 10-19-ը Հայաստանի Հանրապետությունում անցկացված մարդահամարի արդյունքները

2001թ. հոկտեմբերի 10-19-ը Հայաստանի Հանրապետությունում անցկացված մարդահամարի տվյալների մեքենայական մշակման արդյունքում ստացվել են ՀՀ առկա և մշտական բնակչության վերջնական ցուցանիշները:

ՀՀ մշտական բնակչության թվաքանակն ըստ ՀՀ մարզերի

(մարդ)

	Ընդամենը	այդ թվում ժամանակավոր բացակայող	քաղաքային	այդ թվում ժամանակավոր բացակայող	գյուղական	այդ թվում ժամանակավոր բացակայող
ՀՀ	3213117	258066	2066238	155434	1146879	102632
ք.Երևան	1103491	40785	1103491	40785	-	-
Արագածոտն	138307	13365	32867	3484	105440	9881
Արարատ	272017	21435	79885	7051	192132	14384
Արմավիր	276236	22405	98294	9917	177942	12488
Գեղարքունիք	237656	24252	78961	8431	158695	15821
Լոռի	286423	35680	169964	22339	116459	13341
Կոտայք	272500	33364	154007	23703	118493	9661
Շիրակ	283425	27959	174295	13702	109130	14257
Սյունիք	152684	20745	104147	17055	48537	3690
Վայոց ձոր	55998	3678	19606	1498	36392	2180
Տավուշ	134380	14398	50721	7469	83659	6929

ՀՀ առկա բնակչության թվաքանակն ըստ ՀՀ մարզերի

(մարդ)

	Առկա բնակչություն					
	Ընդամենը	այդ թվում ժամանակավոր ներկա	քաղաքային	այդ թվում ժամանակավոր ներկա	գյուղական	այդ թվում ժամանակավոր ներկա
ՀՀ	3002594	47543	1945514	34710	1057080	12833
ք.Երևան	1091235	28529	1091235	28529	-	-
Արագածոտն	126278	1336	29607	224	96671	1112
Արարատ	252665	2083	73469	635	179196	1448
Արմավիր	255861	2030	88866	489	166995	1541
Գեղարքունիք	215371	1967	70858	328	144513	1639
Լոռի	253351	2608	148684	1059	104667	1549
Կոտայք	241337	2201	131352	1048	109985	1153
Շիրակ	257242	1776	161298	705	95944	1071
Սյունիք	134061	2122	88010	918	46051	1204
Վայոց ձոր	53230	910	18328	220	34902	690
Տավուշ	121963	1981	43807	555	78156	1426

Մշտական բնակչության թվաքանակը ստացվում է մարդահամարի ժամանակ մշտապես ներկա և ժամանակավոր բացակա հաշվառված անձանց ընդհանուր թվաքանակների հանրագումարից:

Մշտապես ներկա բնակչություն համարվում են տվյալ համայնքում մշտապես (սովորաբար) բնակվող և մարդահամարի հաշվառման պահին ներկա անձինք:

Ժամանակավոր բազակա են համարվում այն անձինք, ովքեր մշտապես (սովորաբար) բնակվում են տվյալ համայնքում՝ քաղաք, գյուղ, տուն (շինություն), սակայն մարդահամարի կրիտիկական պահին՝ հոկտեմբերի 9-ի լույս 10-ի գիշերվա ժամը 12-ին, գտնվել են տվյալ քաղաքային կամ գյուղական համայնքի (այդ թվում՝ հանրապետության) սահմաններից դուրս, և նրանց բացակայության տևողությունը՝ նշված պահի դրությամբ չի գերազանցել մեկ տարուց:

Առկա բնակչության թվաքանակը ստացվում է մշտապես ներկա և ժամանակավոր ներկա հաշվառված անձանց ընդհանուր թվաքանակների հանրագումարից:

Ժամանակավոր ներկա են համարվում այն անձինք, ովքեր մարդահամարի կրիտիկական պահին՝ հոկտեմբերի 9-ի լույս 10-ի գիշերվա ժամը 12-ին, գտնվել են տվյալ համայնքում՝ քաղաք, գյուղ, տուն (շինություն) կամ ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպությունում, սակայն նրանց մշտական բնակավայրը գտնվում է տվյալ համայնքի (այդ թվում՝ հանրապետության) սահմաններից դուրս, և նրանց գտնվելու տևողությունը՝ նշված պահի դրությամբ չի գերազանցել մեկ տարուց:

Մարդահամարի վերջնական արդյունքներով բնակչության թվաքանակից զատ, այլ մանրամասնված ցուցանիշների ստացումը և գրքային ու էլեկտրոնային եղանակով հրապարակումը նախատեսված է 2003թ. II կիսամյակի ընթացքում: